ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Ղուկասավան համայնք, ՀՀ Արարատի մարզ
գ. Ղուկասավան, Հեռ. 0236 6-28-01; 093-38-63-99 ,
ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

N 7
12 հունվար 2017թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Արարատի մարզի Ղուկասավան համայնքի ավագանու 12.01.2017թ. թիվ 1-Ա, 2-Ն, 3-Ն և 4-Ա որոշումների կրկնօրինակները առդիր 36 թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, 12-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 12-ի թիվ-1 հերթական նիստի օրակարգը՝

1. Ղուկասավան համայնքի 2017-2021թթ.սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին

2. Ղուկասավան համայնքի 2017թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին

3. Ղուկասավան համայնքի 2016թ. բյուջեի կատարողականի քննարկման մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈՌՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի 2017-2021թթ սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելված 1-ի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈՌՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված1

Հաստատվել է ՀՀ Արարատի մարզի Ղուկասավան համայնքի

ավագանու 2017թ. հունվարի 12-ի

1 նիստի թիվ 2-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ղուկասավան 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1.Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....4

2.Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները 13

3. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....16

4. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....18

5. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում.....19

6. Ոլորտային ծրագրեր.....22

Եզրափակում.....25

Հավելված.1 Համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը

Հավելված.2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնքի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական հնգամյա զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել հաջորդ հինգ տարիների Ղուկասավան համայնքի զարգացման գերակա ուղղությունները և նշել դրանց հասնելու հնարավոր ճանապարհներն ու անհրաժեշտ միջոցառումները: Գերակա ուղղությունների հստակ սահմանումները հնարավորություն կստեղծեն իրագործել տեղական ինքնակառավարման առաքելությունը և հասնել համայնքի զարգացման տեսլականին: Համայնքի զարգացման գերակա ուղղությունները սահմանելիս հաշվի են առնվել համայնքի ֆինանսական ռեսուրսները, տեղական առանձնահատկությունները, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Գերակա ուղղություններից բխող հիմնխնդիրները սահմանում են որոշակի ժամկետում իրականացվող անելիքների մասին: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը ձևավորվում է համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրային դրույթների, համայնքի հնարավորությունների ու ներուժի գնահատման, կառավարության, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններից սպասվելիք ծրագրերից, տեղական հարկերից եւ տուրքերից գոյացող գումարների նախնական բաշխումների, համայնքի բնակիչների նվիրատվություններից նախատեսվող օգնությունների նպատակային օգտագործման հիման վրա:

Համայնքի զարգացման ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության եւ առկա մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի հստակ իրականացումը:

Նշենք, որ ներկայացվող համայնքի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ղուկասավան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Ծրագրի նախագծի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժինները, քննարկվելու և հաշվի են առնվելու հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում

Ղուկասավանը ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր կենցաղային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը:

1.2Համայնքի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ

Ղուկասավան համայնքը գտնվում է Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից 25 կմ հյուսիս-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 845մ: 1831 թվականին ուներ 150, 2001թվականին՝ 2168, այժմ՝ 2277 բնակիչ: Այստեղ գտնվում են 19-րդ դարի եկեղեցու ավերակները: Եկեղեցին բավականին մեծ է եղել: Ըստ տարեցների հիշողությունների 1930 թվականին եկեղեցին կանգուն է եղել, բայց վնասված. քանդվել է 1938 թվականին աստվածամերժման տարիներին:

Գյուղի տարածքի մյուս հուշարձանը, որը չի ուսումնասիրված, Կալեր կոչվող վայրում գտնվող ամրոցի մնացորդներն են՝ եկեղեցու հյուսիս-արևմտյան պատից դուրս:

Գյուղն ունի հայրենական մեծ պատերազմի և Արցախի հերոսամարտին նվիրված հուշարձան կոթողներ:

1.3ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2334 մարդ, այդ թվում՝ տղամարդիկ 1168 և կանայք 1166: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ1.

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2334
	Տղամարդիկ	1168
	Կանայք	1166
	0-15տարեկան , այդ թվում՝	561
	16-62 տարեկան	763
	63-ից բարձր տարեկան	315
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	237
3.	Փախստականներ	6

4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	9
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	18
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	16
	Մանկուց հաշմանդամներ	6
9.	Աշխատունակներ	1000
10.	Զբաղվածներ	850
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	150
	Գրանցված	0
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	550
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	
	Նպաստառու ընտանիքների թիվը	62
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմ-ներում զոհվածների ընտանիքների թիվը	4
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	20
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	20
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	20
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	25

1.4Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարը պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայսատանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է

համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18–ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանի՝ բաղկացած 7 անդամից: Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է Հավելված 1.-ում:

Ղուկասավանի համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, զբաղեցնում է կուլտուրայի տան մի հատվածը: Շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված, համալրված է համակարգչային տեխնիկայով: Համայնքում չկան ֆորմալ միավորումներ, սակայն համայնքի բնակչությունը շատ համախմբված է: Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է Հավելված 2.-ում:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ղուկասավան համայնքը ունի գոտիավորման նախագիծ: Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Ղուկասավան համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն՝ շաբաթը երկու անգամ, սակայն համայնքի տարածքում աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Ղուկասավան համայնքում միայն կենտրոնական փողոցն է ապահովված ցերեկային լուսավորությամբ: Գերեզմանատունը ամբողջությամբ ցանկապատված է: Համայնքը գազաֆիկացված է, բնակչությունը ամբողջությամբ օգտվում է կապույտ վառելիքից: Համայնքը խմելու ջուր է ստանում Սիս համայնքի պոմպակայանից, շուրջօրյա:

1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր, կան միայն բնակելի առանձնատներ: Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 92.21 հազ. քմ: Համայնքում առանձնատների թիվը՝ 550 և դրանց ընդհանուր մակերեսը՝ 92.21 հազ. քմ, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը կազմում է 20:

Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգված են, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների կառուցման և վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ հաճախակի չեն կառուցվում:

1.7 Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 850մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 60 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 790մարդ, 20 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների: Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Գծապատկեր1.



Գծապատկերից երևում է, որ բնակչության 93 տոկոսը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքով և միայն 7 տոկոսն է զբաղվում ոչ գյուղատնտեսական աշխատանքով:

Համայնքի տարածքում գործում են 5 խառը խանութներ, հանրային սննդի օբյեկտ, ավտոտեխ սպասարկման 1 կետ:

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը:

1.8 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 259.07 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 127.09 հա , բնակելի շինությունների տակ հողեր՝ 92.21 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 4.78 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի հողեր՝ 1.82 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 4.82 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 7.62 հա, 1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է՝0,20հա:

Ղուկասավան համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ 2-ում.

NN	Նախատեսված գործունեության նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ											
					ՀՀ բացառապես քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական					Գերազանց կանգնող հողամասերի կոդերը 2-8տ սա-ՀՀ կարգի դ սորինվ
							ընդամենը (5+6+7)	անհատաբար օգտագործման	տրված կարգավորման	կարգավորման ենթակա չէ	ընդամենը (9+10+11)	անհատաբար օգտագործման	ճանապարհների, գետ.	կարգավորման ենթակա չէ		
		P	Q	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1,1	1. Գյուղատնտես. նպատ.	վարելահող		101.10	93.54		7.56		7.56							
1,2		բազմ տնկարկներ, ընդամենը														
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի														
1.2.2		խաղողի այգի														
1.2.3		այլ բազմամյա														
1,3		խոտհարք														
1,4		արոտ														
1,5		այլ հողատեսքեր		25.99	1.41		24.59			24.59						
1		Ընդամենը		127.09	94.95		32.14		7.56	24.59						
2,1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		92.21	90.19	0.17	1.85		0.277	1.573						
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		92.21	90.19	0.17	1.85		0.277	1.573						
2.1.2		այգեգործական (ամառն)														
2,2		հասարակական կառուցապ.		5.16	3.05		1.01			1.01	1.10	1.10				
2,3		խառը կառուցապատման														
2,4		ընդհանուր օգտագործման		14.32			14.32			14.32						
2,5		այլ հողեր		1.25			1.25			1.25						
2		Ընդամենը		112.94	93.24	0.17	18.43		0.277	19.726	1.10	1.10				
3,1	3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	արդյունաբերության		0.10	0.10											
3,2		գյուղտնտեսական, արտադր.		2.20	2.20											
3,3		պահեստարանների		0.26	0.26											
3,4		ընդերք օգտագործման		2.22			2.22		2.22							

3		Ընդամենը		4.78	2.56		2.22		2.22							
4,1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառ. օբ.	Էներգետիկայի		0.03		0.02	0.01			01						
4,2		կապի														
4,3		տրանսպորտի		1.61							1.61			1.61		
4,4		կոմունալ ենթակառուցվածք		0.18			0.18			0.18						
4		Ընդամենը		1.82		0.02	0.19			0.19	1.61			1.61		
5,1	5. Հասարակ. սպիտակեղեն տարածքների	բնապահպանական														
5,1.1		այդ թվում՝ արգելոցներ														
5,1.2		արգելավայրեր														
5,1.3		ազգային պարկեր														
5,2		առողջարարական														
5,3		հանգստի														
5,4		պատմական և մշակութային		4.82			4.78			4.78	0.04			0.04		
5		Ընդամենը		4.82			4.78			4.78	0.04			0.04		
6	6. Ճշգրտակրթության	Ընդամենը														
7,1	7. Սեփականային	անտառ														
7,2		թփուտ														
7,3		վարելահող														
7,4		խոտհարք														
7,5		արոտ														
7,6		այլ հողեր														
7		Ընդամենը														
8,1	8. Ջրային	գետեր		5.61												
8,2		ջրամբարներ														
8,3		լճեր														
8,4		ջրանցքներ		0.97			0.97			0.97						
8,5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.		1.04							1.04			1.04		
8		Ընդամենը		7.62			0.97			0.97	6.65			6.65		
9,1	9. Պահուստային	աղուտներ														
9,2		ավազուտներ														
9,3		ճահիճներ														
9,4																

9,5		այլ անօգտագործելի հողեր													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ (1+2+3+4+5+6+7+8+9)		ՀՈՂԵՐ		259.07	190.75	0.19	58.73			51.18	9.40	1.10		6.3	

1.9 Գյուղատնտեսություն

Համայնքում զբաղվածության հիմնական ճյուղը բուսաբուծությունն է, զբաղվում են կարտոֆիլի, լոլիկի, ծաղիկների և այլ բանջարա- բոստանային կուլտուրաների մշակությամբ: Համայնքում անասնապահությամբ զբաղվում են 36 ընտանիք:

Աղյուսակ3.

ՀՀ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	325
	Կովեր	74
2.	Խոզերի գլխաքանակը	114
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	34
4.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1850
5.	Մեղվաընտանիքների քանակը	160

1.10Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Համայնքում մի շարք տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը հանրային սննդի կազմակերպման և արտադրական հիմնարկների գործունեության բնագավառում շատ օգտակար է, մյուս կողմից նրանց շրջակայքը ամենօրյա մաքրման, աղբի հեռացման խնդիր ունի: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր-օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար:

Համայնքի բնակիչներից շատերը դեռևս տնտեսական, հաճախ նաև շինարարական աղբը թափում են աղբի համար անթույլատրելի տարածքներում: Սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքները դեռևս շատ են: Տնտեսության առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը կօժանդակի աղբահանության աշխատանքների օպերատիվ իրականացմանը: Այդպիսի խնդիրներից են աղբահան մեքենաներ չունենալը: Աղբահանության ծավալների ավելացման դեպքում նաև առաջանում է մեքենայի ձեռքբերման անհրաժեշտություն:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհը հիմնականում ասֆալտապատ է, ունի որոշ հատվածներում փոսային նորոգումների խիստ կարիք: Ներհամայնքային ճանապարհների մոտ 70 %-ը բարեկարգ են, խճապատված են, կարիք ունեն մշտական նորոգումների:

Համայնքում տեղադրված են ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքի ներսում ավտոկանգառներ կան: Համայնքի տարածքով անցնում է մեկ ավտոբուս: Միջհամայնքային, ներհամայնքային և միջպետական ճանապարհները անցանելի են և գտնվում են բարվոք վիճակում:

1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքում գործում է մեկ հիմնական դպրոց: Համայնքում գործող կրթական հաստատությունները մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Դպրոցը կապիտալ վերանորոգվել է և գտնվում է բարվոք վիճակում: Դպրոցում սովորում են շուրջ 267 աշակերտներ: Ուսուցիչների և սպասարկող անձնակազմի թիվը հասնում է 29-ի: Համայնքի տարածքում գործող մսուր-մանկապարտեզը ևս գործում է, ենթարկվել է մասնակի վերանորոգման, սակայն ունի լոկալ ջեռուցման և հիմնովին նորոգման կարիք:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի բուժկետ, որը հիմնովին կառուցվել է 2013թ. համայնքապետարանի միջոցների հաշվին: Բուժկետը ունի երկու աշխատող, ունի անհրաժեշտ գույք և սարքավորումներ: Բժշկական այցելություններ համայնք կատարում են նաև երկու մասնագետ բժիշկներ՝ մանկաբարձ և մանկաբույժ:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ ՍՊՈՐՏ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մշակույթի տուն, որը հիմնովին վերանորոգման կարիք ունի: Համայնքի դպրոցում առկա է սպորտ հրապարակ, որտեղ երեխաները զբաղվում են սպորտով, համայնքի գրադարանը ունի 8346 միավոր գիրք, տեղակայված է վարչական շենքում և գործում է:

1.15 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են համապատասխանաբար առևտրի օբյեկտ՝ հիմնականում 5, զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով, նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային

մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար:

1.16 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ–երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, տեղադրվում են համայնքի պաշտոնական կայքում 'ghukasavan.am – ում, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը և գործունեության թափանցիկությանը: Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ << տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-ի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:

1.17 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Համայնքը ունի բնակչության տարահանման հանձնաժողով, բնակչության տարահանման գործողությունների պլան:

Համայնքում իրականացվել է տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման գործողություն, որի հիման վրա 2016թ. հոկտեմբերի 25-ին

պլանավորվել ու իրականացվել է ուժեղ երկրաշարժի դեպքում բնապահպանական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի աղետների ռիսկերի կառավարման հարցերում շարունակել համագործակցությունը հանրապետական համապատասխան մարմինների հետ՝ մասնավորապես << արտակարգ իրավիճակների նախարարության հետ,
- << կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով << արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում պետք է կազմվի համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը,
- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքային միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- բերքի պահպանման նպատակով բնակավայրերում հակակարկտային կայաններ տեղադրելու միջոցառումների ձեռնարկում՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ) անհրաժեշտ միջոցների հայթայթում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող արտադրական ՍՊԸ-ների և ԱՁ-ների, առևտրի մանր կետերի, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Համայնքի կայուն զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների թիրախավորման համար անհրաժեշտ է գնահատել համայնքի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունները և սպառնալիքները՝ կատարել վերլուծություն:

2.1ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքը գտնվում է Երևանից 2 կմ հեռավորության վրա:
- Ապահովված է շրջօրյա խմելու ջրով և ոռոգման ջրով շնորհիվ Հրազդան գետի, որի երկայնքով փռված է գյուղը:
- Համայնքում մեծ աշխատուժի առկայություն
  Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը:
- Մեծ հնարավորություն ունի գյուղմթերքը իրացնելու մայրաքաղաքի շուկաներում:
- Համայնքը ունի ավելի քան բուհի 100 շրջանավարտ , տարբեր մասնագիտությունների , որոնք կարող են կազմակերպել համայնքում տարբեր բնակավառների հետ կապված աշխատանքներ:
- Համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և բնակչության վստահություն:
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման
- Համայնքում առկա հիմնական դպրոցի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում խմելու ջրի ներհամայնքային համակարգի շրջօրյա առկայությունը
- Կենտրոնական փողոցի լուսավորումը
- Համայնքում գազամատակարարման առկայությունը
- Գործող կահույքի արտադրամասը որոշ չափով լուծում է բնակչության աշխատանքի խնդիրը
- Տնամերձ հողամասերում ջերմատների առկայություն, որը բարձրացնում է բույսերի բերքատվությունը:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակը:
  Գյուղատնտեսական մթերքների իրացման, շուկայական ցածր գների պատճառով գյուղացու եկամուտների նվազում:
- Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայությունը:
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մաշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը:
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը:
- Համայնքում տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով:
- ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրումը:
- Համայնքի նոր փողոցների ոռոգման ցանցի անմխիթար վիճակը:

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խելամտորեն օգտագործել համայնքի ֆինանսական միջոցները,
- Խթանել Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը,
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման,
- Բարձրացնել Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություն, ռազմավարություն և ծրագրեր,
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները,
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների և այլ արժեքների առկայությունից,
- Մեղմացնել համայնքում Տեղական Ինքնակառավարման վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները,
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը,
- Բարձրացնել համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը,
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով,
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը,
- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը,

- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը,
- Միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը,
- Մեծ աշխատուժի առկայություն,
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հանրավորություն:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքում ոռոգումը իրականացվում է մեխանիկական եղանակով , սակայն գետից ջուր վերցնելու համար օգտագործվում են էլեկտրական փականներ և հոսանք չլինելու դեպքում համայնքը կզրկվի ոռոգումից : Չկան խողովակներ և կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ցանցերի վերանորոգման համար:
- Համայնքում բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը:
- Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը:
- Համայնքում բացօթյա բուսաբուծությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը (եկամտաբերությունը պակասել է) վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը:
- Համայնքի երիտասարդների արտագաղթը. արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:
- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտություն , կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների պատճառ:

2.5 Վերլուծություն

Սույն վերլուծությունը ներկայացնում է համայնքում առկա ենթակառուցվածքների, ռեսուրսների, տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: Այն նպատակ է հետապնդում վերհանել առկա հիմնական խնդիրներն ու գնահատել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղղությունները:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Ղուկասավան համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, ծաղկաբուծության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և

մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- չխորացնել համայնքի զարգացմանը խոչընդոտող պատճառները և ապահովել համայնքի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, բանջարեղենի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների , աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,

- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի կենտրոնում հասարակական տրանսպորտի գործունեության բոլոր ավտոկանգառների ստեղծում,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցի շենքի ներքին հարդարման, դպրոցի շրջակայքի ցանկապատման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (մանկապարտեզի, մշակույթի տան, գրադարանի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

4.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինները նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Մշակույթի տան դահլիճի վերանորոգում:
- Համայնքում ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով շահագրգիռ կազմակերպություններին:
- Տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և շահագործում՝ համագործակցության ներգրավելով մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- Ճապոնական կառավարության հետ իրականացվել են աշխատանքներ համայնքի կենտրոնում <SS Կենտրոն> բացելու վերաբերյալ: Համայնքապետարանը <US ԱՐՏ> ՍՊԸ-ի հետ համատեղ աշխատանքների արդյունքում ձեռք է բերել <SS Կենտրոն>-ի շենքի կառուցման համար աշխատանքային նախագիծ: Շենքի կառուցման հետ կապված աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Կատարելով համայնքի 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2014-15թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված

պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2016թ. ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

Աղյուսակ 4. Համայնքի 2014-2015թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

	Մուտքերի անվանումը	2016. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. փաստ.	2019թ. նախատ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	49976.6	52035.0	50000.0	50000.0	50000.0	50000.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	48917.4	52035.0	50000.0	50000.0	50000.0	50000.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	11815.3	11815.3	11815.3	11815.3	11815.3	11815.3
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	5238.9	5238.9	5238.9	5238.9	5238.9	5238.9
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1319.6	1319.6	1319.6	1319.6	1319.6	1319.6
	Հողի հարկ	3919.3	3919.3	3919.3	3919.3	3919.3	3919.3
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	6374.4					
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	6374.4	6500.0	6500.0	6500.0	6500.0	6500.0
	Տեղական տուրքեր	202.0	202.0	202.0	202.0	202.0	202.0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	36582.1	36582.1	36582.1	36582.1	36582.1	36582.1
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով	36582.1	36582.1	36582.1	36582.1	36582.1	36582.1

	տրամադրվող դոտացիաներ						
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	520.0	520.0	520.0	520.0	520.0	520.0
3.5	Վարչական գանձումներ						
	Տեղական վճարներ	520.0	520.0	520.0	520.0	520.0	520.0
4.	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	488.7	2734.9	2000,0	2000.0	2000.0	2000.0

Գծապատկեր2.

Գծապատկերից երևում է, որ 2016թ. բյուջեի հարկային եկամուտների 67 տոկոսը ստացվել է գույքահարկի հաշվին, իսկ 33 տոկոսը հողի հարկի հաշվին: Հաշվի առնելով հաջորդ տարիների կանխատեսումները տոկոսային հարաբերությունը գրեթե չի փոփոխվի:

Համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր՝ հիմնականում համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից համայնքի ֆոնդային բյուջե հատկացումների հաշվին, ինչպես նաև հողերի իրացումից մուտքերի հաշվին:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (6հաստիքային միավոր) 2016 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 25608.713 հազ. դրամ իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 22053.374հազ. դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համայնքի 2016-2021թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3) հնարավորություն կլինի կատարելու մոտ 10 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա, բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցները կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսեր կատարելու համար:

6.ՈՒՂՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

•Բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման եւ գանձման արդյունավետ քաղաքականություն:

•Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ:

•Բարելավել կրթական և մշակութային ոլորտի գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան:

• Շարունակել համայնքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

• Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

•Համայնքային տարբեր շահագրգիռ խմբերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների ներգրավմամբ ու նախաձեռնություններով իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ելնելով համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, համայնքի ղեկավարի կողմից առաջարկվել է ծրագրերի ցանկը (աղյուսակ 4)՝ ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում:

Աղյուսակ 5. Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը
1	Սաթենի մ/մ շենքի վերանորոգում
2	Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում
3	Բնակչությանը որակյալ խմելու ջրով ապահովում
4	Եկեղեցու կառուցում ըստ նախագծի
5	Նոր թաղամասերի փողոցների խճապատում
6	Մշակույթի տան դահլիճի վերանորոգում և կահավորում
7	Համայնքի կենտրոնում բարեկարգման աշխատանքների կատարում
8	Դպրոցի շրջակայքի ցանկապատում

Առաջնահերթությունները որոշելու նպատակով սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ որոշվել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

1.« Սաթենի մ/մ շենքի վերանորոգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. Ծրագրի նպատակը –համայնքի մ/մ-ի շենքը ունի վերանորոգման խիստ կարիք, շենքը չունի նաև լոկալ ջեռուցում: Անհրաժեշտ է ապահովել մանկապարտեզ հաճախող երեխաների համար գրավիչ և զարգացնող միջավայր: Հիմնական խնդիր է հանդիսանում տեղական բյուջեից կատարել հատկացումներ 2017-2021թթ. մանկապարտեզը վերանորոգելու և լոկալ ջեռուցումով ապահովելու համար:

2. Ծրագրից ակնկալվող արդյունքները – մանկապարտեզ հաճախող երեխաների թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետության բարձրացում, անվտանգության պայմանների բարելավում:

3. Ծրագրի հիմնական շահառուները – մանկապարտեզ հաճախող երեխաներ և երեխաների ծնողներ:

2.« Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Համայնքի ոռոգման ցանցը կառուցված է հողային հունով: Տեղի է ունենում մեծ քանակությամբ ջրի կորուստ: Անհրաժեշտ է ջրամատակարարումը հեշտացնելու և ջուրը անկորուստ օգտագործելու համար անցկացնել ոռոգման ցանցի կիսախողովակներ:

3.« Բնակչությանը որակյալ խմելու ջրով շուրջօրյա ապահովում, խմելու ջրի մատակարարման ցանցի վերանորոգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում շուրջօրյա ջրամատակարարումը որակյալ ջրով: Նոր թաղամասերում խմելու ջրագծերի անցկացում: Տեղական բյուջեում նախատեսել հատկացումներ խմելու ջրագծերի նորով փոխարինման և նոր թաղամասերում ջրագծերի անցկացման համար: ՀՀ կառավարության հաստատված ծրագրով Ղուկասավան համայնքը ընդգրկվել է բնակավայրերի խմելու ջրով ապահովման Համաշխարհային բանկի միջոցներով կատարվող ծրագրում և այդ աշխատանքներում համայնքը պետք է ունենա իր մասնակցությունը:

4.«Եկեղեցու շրջակայքում եղած կիսավեր շինությունների պատերի քանդում, եկեղեցու կառուցում ըստ նախագծի »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Ծրագրի նպատակն է հատկացումներ կատարել համայնքի բյուջեից եկեղեցու կառուցման համար: Համայնքի ժողովրդի մասնակցությունը թե աշխատանքների կատարման, թե նյութական միջոցների հատկացման ձևով:

5.« Նոր թաղամասերի փողոցների խճապատում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Համայնքի նոր թաղամասերի փողոցները կարիք ունեն խճապատման: Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում նոր թաղամասերի փողոցների բարեկարգումը: Հիմնավոր նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում տեղական բյուջեից կատարել հատկացում 2017-2021թթ. թաղամասերի փողոցների խճապատման համար:

2017թ.-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ կապիտալ ծախսերը.

/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը, հազ. դրամ
1	Փողոցների խճապատում	1000
2	Ցերեկային լուսավորություն	500
3	Խմելու ջրագծերի վերանորոգում	700
4	Գազի գծի կառուցում	535

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի տեսլականի, նպատակների, ձգտումների և ջանքերի ամփոփումն է մեկ փաստաթղթում: Այս փաստաթուղթը համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջությունն է և պարունակում է այն արդյունքները, որին ձգտում են համայնքները և արտացոլում է այն հարցերը, որոնք համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևոր են:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: Ելնելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, համայնքապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր, որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել բնակիչների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները:

Համայնքի բնակիչները պետք է ՀԶԾ նկատմամբ սեփականության զգացում ունենան, պատասխանատվություն կրեն և բոլոր ջանքերը ներդնեն ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար:

Համայնքի ամբողջ բնակչության օժանդակությունն ու ներդնումն ապահովելու համար ՀՀԶԾ կազմման և իրականացման վերահսկողության աշխատանքները պետք է լինեն առավելագույն չափով մասնակցային, որն էլ իր հերթին ենթադրում է բնակիչների ընդգրկումը համայնքի կառավարման մեջ , որն էլ արտահայտում է համայնքի ողջ բնակչության հավաքական կամքն ու ցանկությունը:

Հավելված1. ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	
Համայնքի ղեկավար	
Համայնքի ղեկավարի տեղակալ	
Աշխատակազմի քարտուղար	/1.2-1/
Աշխատակազմի գլխավոր մասնագետ	/2.3-1/
Աշխատակազմի առաջատար մասնագետ	/3.1-1/
Աշխատակազմի առաջատար մասնագետ	/3.1-2/
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	/3.2-1/
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	/3.3-1/
Կուլտուրայի տան վարիչ	
Գրադարանավար	

ՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱԿԱԶՄ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Պահակ
Հավաքարար
Այգեպան

«Սաթենի մ/մ» ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի կառուցվածքը՝

ՀՀ	Հաստիքը	Թվաքանակը
1.	Տնօրեն	1
2.	Բուժքույր	1
2.	Դաստիարակ	1
3.	Դաստիարակ	3
4.	Երաժշտական դաստիարակ	1
5.	Խոհարար	1
6.	Դաստիարակի օգնական	1
7.	Գործավար	1
8.	Դաստիարակի օգնական	1
9.	Տնտեսվար	1

10.	Պահակ	1
11.	Լվացարար	1
12.	Հաշվապահ	1

Հավելված.2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

N	Անվանումը	Փաստացի քանակը
1.	Մանկապարտեզի շրջ. քարե պարիսպ	1
2.	Պահեստի շենք	1
3.	Ակումբի շենք	1
4.	Մանկապարտեզի շենք	1
5.	Բուժ. ամբուլատորիայի շենք	1
6.	Ոռոգման ցանց	1
7.	Ասվալտապատ ճանապարհ	1
8.	Ջրատար ցանց կիսախողովակ	1
9.	Տրանսֆորմատոր S/Մ 400/100	1
10.	Շկաֆ	1
11.	Կշեռք բազավոյ	1
12.	Ցերեկային լույս. ցանց	1
13.	Արցախ. ազատ. հուշակոթող	1
14.	Էլեկտրական ենթակայան	1
15.	Գերեզմանատան պատ	2
16.	0.4 կվ լար. լուսա. ցանց	1
17.	Կուլտ. տան շրջակ. քարե պարիսպ	1
18.	Ավտոմեքենա 2004թ. 31105-120	1
19.	Մարդատար ավտոմեքենա KIA CERATO	1
20.	Գազաբալոնային համակարգ	1
21.	Փափուկ կահույք՝ 2 բազկաթ. 1 բազմոց	3
22.	Գրասեղան	1
23.	Սեղան	1
24.	Մոնիտոր Benq 17 LCD G700A	1
25.	Համակարգիչ PC E4600 INTELDG 31PR	1

26.	Լազերային տպիչ Lasep Jet P1102	1
27.	Լազերային տպիչ Lasep Jet P1566	1
28.	Բազմաֆունկցյոնալ տպիչ սարք CANON I-SENSYS MF 4410	1
29.	Բազմաֆունկցյոնալ տպիչ սարք F2480	1
30.	Համակարգիչ P4	3
31.	Մոնիտոր LG LED 19 E1941	1
32.	Մոնիտոր Samsung LED 18.5 S19A300	1
33.	Անխափան սնուցման սարք Mercury 800VA	2
34.	UPS PR 0600	1
35.	Պատճենահանման սարք	1
36.	UPS 1200VA – E -PRO	1
37.	Շկաֆ երկաթից	4
38.	Աթոռ փափուկ	12
39.	Պահարան կոմպլեկտ	2
40.	Սեյֆի պահարան	1
41.	Պահարան	1
42.	Նախասրահի կահույք	1
43.	Գրասեղան պրոֆիլից փոքր	2
44.	Գրասեղան պրոֆիլից միջին	1
45.	Գրասեղան պրոֆիլից մեծ	1
46.	Գրասեղան դիմադիրով և կոլադիրով	1
48.	Բնական գազի գիծ	1
49.	Կախիչ	1
50.	Օդակարգավորիչ LGEN	2
51.	Համակարգիչ INTEL	1
52.	UPS INVADER	1
53.	UPS MERKCURY	1

2. Գրադարանի գույք

N	Անվանումը	Փաստացի քանակը
1.	Գրական ֆոնդ	8346

2.	Էտաժերկա	1 հատ
3.	Կատալոգի արկղ	2 հատ
4.	Սեղան 1 տումբանի	1 հատ
5.	Երկաթյա պոլկա	8 հատ
6.	Աթոռ կիսափափուկ	2 հատ
7.	Կրակ մարիչ	1 հատ

3. Կուլտուրայի տան գույք

N	Անվանումը	Փաստացի քանակը
1.	Ակարդեոն	1
2.	Սեղան 1 տումբանի	1
3.	Կլարնետ պատիանով	1
4.	Դուդուկ	2
5.	Թատերական աթոռներ	180

4. Բուժամբուլատորիայի գույք

N	Անվանումը	Փաստացի քանակը
1.	էլ.սրտագրման սարք ECG101G	1
2.	Ապակեպատ պահարան 2 դռնանի	2
3.	էլեկտրոնային կշեռք հասակաչափով	1
4.	1-ին բուժ օգն. գործիքների հավաքածու	1
5.	Աթոռ	6
6.	պահարան	3
7.	Ընդունարանի սեղան	1
8.	Կախիչ	1
9.	Աշխատանքային սեղան	4
10.	Հիվանդանոցային աթոռ	3
11.	Ընդունարանի պահարան	1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3-Ն

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի 2017թ. բյուջեի փոփոխությունը համաձայն հավելված 2:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈՌՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱԵՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 2

<< Արարատի մարզի Ղուկասավան

համայնքի ավագանու 12.01.2017թ.

3-Ն որոշման

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

ա.Ղուկասավան համայնքի 2017թ. վարչական բյուջեի 11.1.2 համայնքի պահուստային ֆոնդ նախահաշվի 4891 պահուստային միջոցներ հոդվածը պակասեցնել 1782000 դրամով, որն ավելացնել՝

1. 08.2.3 Կուլտուրայի տուն նախահաշվի 4111 աշխատավարձեր հոդվածին 1412000 դրամ
2. 9.1.1 նախադպրոցական կրթություն նախահաշվի 4637 ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ-ին ավելացնել 370000 դրամ

բ. Ղուկասավան համայնքի 2017թ. ֆոնդային բյուջեում նախատեսված ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 04.05.01 ասֆալտ բետոնյա ծածկի վերանորոգում նախահաշվից պակասեցնել 413400 դրամ այդ թվում՝

1.1 5143 շենք և շինություններ կապիտալ վերանորոգում հոդվածից 363400 դրամ

1.2 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածից 50000 դրամ

գ. Ղուկասավան համայնքի 2017թ. ֆոնդային բյուջեի եկամտատեսակները ավելացնել 1321500 դրամով ի հաշիվ վարչական բյուջեի տարեվերջյան ազատ մնացորդի:

դ. Ղուկասավան համայնքի 2017թ ֆոնդային բույջեի ծախսեը ավելացնել ընդամենը 1734900 դրամով այդ թվում՝

1. 06.04.01 արտաքին լուսավորության ցանց նախահաշվին ավելացնել 500000 դրամ այդ թվում՝

1.1 5113 շենք և շինությունների կապտալ վերանորոգում հոդվածին 500000 դրամ

2. 06.03.01 ջրամատակարարում նախահաշվին ավելացնել 700000 դրամ այդ թվում

2.1 5112 շենք և շինությունների կապիտալ շինարարաություն հոդվածին 650000 դրամ

2.2 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածին 50000 դրամ

3. 04.03.05 նավթամթերք և բնական գազ նախահաշվին ավելացնել 534900 դրամ այդ թվում

3.1 5112 շենք և շինությունների կապիտալ շինարարություն հոդվածին 484900 դրամ

3.2 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածին 50000 դրամ

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4-Ա

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաշվի առնելով 2016թ. բյուջեի կատարողականը՝

2016թ վարչական բյուջեի եկամտային մասի կատարողականը

Եռամսյակային պլանը	Փաստացի կատարողականը	Կատարողականը %-ին հարաբերությամբ
49976600 ՀՀ դրամ	49983629 ՀՀ դրամ	100%

2016թ. վարչական բյուջեի ծախսային մասի կատարողականը՝

Եռամսյակային պլանը	Փաստացի կատարողականը	Կատարողականը %-ին հարաբերությամբ
49976600 ՀՀ դրամ	476602087 ՀՀ դրամ	95.3 %

2016 ֆոնդային բյուջեի եկամտային մասի կատարողականը

Եռամսյակային պլանը	Փաստացի կատարողականը	Կատարողականը %-ին հարաբերությամբ
488700 ՀՀ դրամ	488700 ՀՀ դրամ	100%

2016թ. վարչական բյուջեի ծախսային մասի կատարողականը

Եռամսյակաին պլանը	Փաստացի կատարողականը	Կատարողականը %-ին հարաբերությամբ
488700 ՀՀ դրամ	449883 ՀՀ դրամ	92.0%

համայնքապետարանի աշխատանքների կատարումը ընդունել ի գիտություն:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈՌՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ